



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 4 (40)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Մ Ա Ս
Չ Ա Տ Ի
1

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2006 թվականի դեկտեմբերի 15-ից

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	4, 158
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 160
ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ	24, 176
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	26, 178
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ	28, 180
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	30, 182
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	33
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	35
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	93
ՑՈՒՑԻՉՆԵՐ	144
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	147
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	183

ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	4
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	6

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
 Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 158
<i>Сведения о выданных патентах.....</i>	<i>6, 160</i>
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	24, 176
<i>Сведения о выданных патентах.....</i>	<i>26, 178</i>
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	28, 180
<i>Сведения о выданных патентах.....</i>	<i>30, 182</i>
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	33
<i>Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания</i>	<i>35</i>
<i>Сведения о продлении действия регистрации товарных знаков.....</i>	<i>93</i>
УКАЗАТЕЛИ.....	144
СООБЩЕНИЯ.....	147
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	183

ЧАСТЬ 2

ТОВАРНЫЕ ЗНАКИ	4
<i>Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания.....</i>	<i>6</i>

CONTENTS

PART 1

INVENTIONS.....	4, 158
<i>Information on granted patents.....</i>	<i>6, 160</i>
UTILITY MODELS.....	24, 176
<i>Information on granted patents.....</i>	<i>26, 178</i>
INDUSTRIAL DESIGNS.....	28, 180
<i>Information on granted patents.....</i>	<i>30, 182</i>
TRADE MARKS.....	33
<i>Information on registered trade marks and service marks</i>	<i>35</i>
<i>Information on renewal of effect of trademark registration</i>	<i>93</i>
INDEXES.....	144
REPORTS.....	147
TWO-LETTER CODES.....	183

PART 1

TRADE MARKS.....	4
<i>Information on registrated trade marks and servise marks</i>	<i>6</i>

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	<i>արտոնագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը</i>
	A1 <i>Գյուտի հիմնական արտոնագիր</i>
	A2 <i>Գյուտի նախնական արտոնագիր</i>
	B2 <i>Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ներկայացման թվականը</i>
23	<i>լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն</i>
24	<i>արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
42	<i>հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը</i>
44	<i>գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
45	<i>գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը</i>
51	<i>միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)</i>
54	<i>գյուտի անվանումը</i>
56	<i>տեղեկատվության աղբյուրներ</i>
57	<i>գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը</i>
62	<i>ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը</i>
65	<i>հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը</i>
71	<i>հայտատուն, երկրի կոդը</i>
72	<i>գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը</i>
73	<i>արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>
85	<i>միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը</i>
86	<i>միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը</i>
87	<i>միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը</i>

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 1848 (13) A2

A01G 9/14

F24J 2/06

(21) AM20060042 (22) 24.03.2006

(42) 02.05.2006

(71) Ռաֆիկ Յամբարձումյան (AM)

(72) Ռաֆիկ Յամբարձումյան (AM)

(73) Ռաֆիկ Յամբարձումյան, Արարատի մարզ, գ. Արգավանդ (AM)

(54) **Ջերմոց**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ արեւային ջերմոցներին:

Ջերմոցն ունի ուղղահայաց պատերի վրա տեղադրված հարթ տանիք եւ պատերից մեկի երկայնքով տեղադրված կանգնակ: Տանիքի ներսի կողմից ամրացված է փայլաթիթեղից կամ հայելիներից պատրաստված անդրադարձիչ ցրիչ: Պատերը լուսաթափանցիկ են եւ ունեն օդափոխիչ պատուհաններ: Կանգնակի վրա հողակապորեն տեղակայված է սելեռման մեխանիզմով գոգավոր անդրադարձիչ: Ջերմոցը կարող է լինել բազմահարկ, որի դեպքում գոգավոր անդրադարձիչների քանակը համապատասխանում է հարկերի քանակին:

Ապահովվում է արեգակնային էներգիայի հավասարաչափ բաշխումը բույսերին, 1 նկ.:

Բույսերի անհող աճեցման համակարգն ունի սնուցիչ լուծույթի ռեգերվուար, պոմպ, գտիչ եւ սնուցիչ լուծույթի խտությունը եւ թթվայնությունն ավտոմատ որոշող եւ կարգավորող սարքեր, խողովակաշար, լցանյութով անոթներ եւ անոթներում լուծույթի քանակը կարգավորող սարք: Խողովակաշարն ունի դեպի անոթ ուղղված, բույսն ընդգրկող եւ կիսօդակաձեւ խողովակի հատվածամաս: Անոթում լուծույթի քանակը կարգավորող սարքը անոթի մեջ հատակին ուղղահայաց տեղադրված, ներքեւի մասում անցքեր ունեցող սնամեջ խողովակ է:

Ծառերը տնկում են հողում տեղադրված անջրանցիկ եւ ամուր նյութից պատրաստված լցանյութով անոթներում: Ապահովում են բույսի սնուցիչ լուծույթի պարբերական շիթի ձեւով մատակարարում բույսն ընդգրկող, ներքեւի մասում անցքեր ունեցող կիսօդակաձեւ խողովակով: Կատարում են բույսի անոթների միաժամանակ եւ սննդալուծույթի անվերադարձ ավտոմատ մատակարարում նախապես մշակված ծրագրով:

Ապահովվում է հողագործության համար ոչ պիտանի հողատարածքների ներառումը գյուղատնտեսության ոլորտ, սնուցիչ լուծույթի ծախսի եւ բույսերի հիվանդությունների բռնկման ու վնասատուների տարածման վտանգի նվազում, 2 անկախ կետ, 4 նկ.:

(51) (2006) (11) 1849 (13) A2

A01G 31/00

A01G 1/00

(21) AM20060023 (22) 20.02.2006

(42) 03.07.2006

(71) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM)

(72) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM), Աննա Յովհաննեսի Թադեոսյան (AM), Ալբերտ Յակոբի Յովսեփյան (AM), Խաչատուր Ստեփանի Մայրապետյան (AM)

(73) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան, Երեւան, Մամիկոնյանց 47/1, բն.47 (AM)

(54) **Բույսերի անհող աճեցման եղանակ եւ դրա իրականացման համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է բույսերի անհող աճեցմանը եւ կարող է օգտագործվել ծառերի բացօթյա աճեցման համար:

(51) (2006) (11) 1850 (13) A2

A23C 9/12

(21) AM20060041 (22) 23.03.2006

(42) 03.07.2006

(71) Մարինա Գեորգիի Կարախանյան (AM)

(72) Մարինա Կարախանյան (AM), Ֆլորա Տիրունի (AM), Ռոզա Մադոյան (AM)

(73) Մարինա Գեորգիի Կարախանյան, Երեւան, Ավան-Առինջ թաղամաս, Տաշքենդի 26, բն.16 (AM)

(54) **Կաթնաթթվային մթերքի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել կաթնամթերքի արտադրության մեջ: Կաթը ենթարկում են ջերմամշակման 90-95°C ջերմաստիճանում, հովաց-

նում մինչեւ 38°C շերմաստիճան եւ մերում: Մերանը ներառում է *Lactobacterium acidophilum* 317/402, *Lactobacterium salivarius* 1628, *Streptococcus cremoris* 3690 եւ *Streptococcus lactis* 3905 մանրէների շտամները, որոնք վերցված են զանգվածային 2:1:1:1 հարաբերակցությամբ: Մերումը կատարում են 4-5 ժամ 37-38°C շերմաստիճանում մինչեւ թթվայնության 80-100°T հասնելը, ապա մերված կաթին ավելացնում են 0,7-1,0 զանգվ. % կերակրի աղ:

Ապահովվում է կաթնաթթվային մթերքի համասեռությունը եւ պահպանման ժամկետի երկարացումը:

(51) (2006) (11) 1851 (13) A2
A23L 1/328
A23P 1/04

(21) AM20050230 (22) 30.12.2005
(42) 02.05.2006
(71) Ռոբերտ Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM)
(72) Արա Աբրամյան (RU), Ռոբերտ Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM)
(73) Ռոբերտ Խաչատրյան (AM), Հասմիկ Հարությունյան (AM), Տիգրան Խաչատրյան (AM)
(74) Չ. Մանուկյան
(54) **Սննդային հատիկավոր խավիարի փոխարինիչի պատրաստման եղանակ եւ սարք**
(57) Պատրաստում են սպիտակուցային կոլոիդային լուծույթ, դոնորականությամբ եւ ջուր ներառող խառնուրդ՝ բաղադրամասերի զանգվածային (7-10):1:(3-5) հարաբերակցությամբ: Որպես սպիտակուցային կոլոիդային լուծույթ օգտագործում են սոյայի կաթի եւ կովի կաթի խառնուրդ՝ զանգվածային (20:1)-(1:20) հարաբերակցությամբ, կամ սոյայի կաթի եւ դալի խառնուրդ՝ զանգվածային (20:1)-(1:20) հարաբերակցությամբ կամ սոյայի կաթի եւ կովի կաթի շիճուկի խառնուրդ՝ զանգվածային (10:1)-(1:1) հարաբերակցությամբ: Պատրաստված խառնուրդին ավելացնում են 1-3 զանգվ. % օսլա: Խառնուրդը տրամաչափված խողովակներով ճնշման տակ մղում են տաքացված ձեթ պարունակող անոթի մեջ: Ստացված հատիկներն անջատում են ձեթից, լվանում ջրով, 30 րոպե դաբաղում թե-

յի լուծամզուքով եւ կրկին լվանում ջրով: Ապա հատիկները մշակում են չհասած ընկույզի կեղեից պատրաստված ներկանյութով, լվանում ջրով եւ աղաջրով: Հատիկներին ավելացնում են ձկնային հոմոգենատից պատրաստված համային էմուլսիա, արգասիքը կշռածրարում են, վերին շերտին քսում են ձեթ եւ փաթեթավորում: Եղանակն իրականացնում են սարքով, որն ունի խառնուրդի անոթ, դրան միացված շիթեր ձեւավորող ծայրոցներով արտաթող խողովակներ, գազի ճնշման աղբյուր եւ հատիկներ ձեւավորող գլանաձեւ անոթ, որի վերին մասը ձագարաձեւ է: Խառնուրդի եւ գլանաձեւ անոթները համառանցք են եւ ունեն շերմապահպանիչ շապիկներ: Գլանաձեւ անոթի հատակում գտնվում է պատրաստի հատիկների կուտակիչ, 2 անկախ կետ, 2 նկ.:

(51) (2006) (11) 1852 (13) A2
A61B 1/00
(21) AM20060066 (22) 25.04.2006
(71) Սիլվա Համբարձումի Գաբրիելյան (AM)
(72) Սիլվա Համբարձումի Գաբրիելյան (AM)
(73) Սիլվա Համբարձումի Գաբրիելյան, Երեւան, Անդրանիկի 111, բն. 52 (AM)
(54) **Corynebacterium ցեղի ֆենոտիպով ոչ թունածին tox-գեն կրող շտամների թունարտադրության էքսպրեսիայի եղանակ in vitro պայմաններում**

(57) Գյուտը վերաբերում է կլինիկական մանրէաբանությանը, մասնավորապես՝ դիֆթերիայի հարուցիչ ֆենոտիպով ոչ թունածին tox-գեն կրող շտամների թունարտադրության էքսպրեսիայի եղանակներին եւ կարող է կիրառվել դիֆթերիայի շտամների լաբորատոր ախտորոշման բարելավման համար:

Փորձարկվող շտամը ցանում են Իլեկ-ագարի վրա Պետրիի թասի մեջ, որի վրա տեղադրում են ստերիլ հեմոդիալիզային ցելոֆան: Ցելոֆանի վրա ցանում են դիֆթերիայի հարուցիչ բարձր թունածնություն ունեցող շտամը: Ցանքը ինկուբացնում են 18-20 ժամ, 37°C շերմաստիճանում: Հաջորդ օրը ցելոֆանը թունածին շտամի հետ զգուշությամբ հեռացնում են: Ցելոֆանի տակ Իլեկ-ագարի վրա առաջացած աճի ճնշման գոտուց վերցնում են էքսպրեսիայի են-

թարկվող գաղութներ եւ կուտակում՝ պասսաժը կրկնելու նպատակով: 2-3 պասսաժներից հետո փորձարկվող շտամի թունաձնությունը որոշում են հայտնի իլեկ-տեստի միջոցով:

Բարձրացվում է փորձարկվող շտամների թունարտադրության էքսպրեսիան:

(51) (2006) (11) **1853** (13) **A2**
A61B 17/00

(21) AM20060028 (22) 22.02.2006
(42) 02.05.2006

(71) Աշոտ Գարուշի Թորոսյան (AM)
(72) Աշոտ Գարուշի Թորոսյան (AM), Էմիլ Ազատի Ենգիբարյան (AM), Մկրտիչ Ֆերդինանդի Մուրադյան (AM)
(73) Աշոտ Գարուշի Թորոսյան, Երեւան, Արմենակ Արմենակյանի փող. 1-ին անց. 21 (AM)
(54) **Դիմային նյարդի կաթվածի դեպքում դեմքի շտկման վիրահատական եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է դեմքի կոսմետիկ վիրահատություններին:

Դեմքի վնասված կողմի հարականջային շրջանում եւ բերանի անկյան շրջանում կատարում են կտրվածքներ, միացնում դրանք թունելով, որի մեջ մտցնում են պատվաստանյութի շերտ: Շերտի մի ծայրը կցակարում են բերանի անկյան մկանին, ձգում այն մինչեւ նորմալ մակարդակը, երկրորդ ծայրը ամրակցնում են այտադեղի ոսկրին եւ կարում երկու կտրվածքները: Որպես պատվաստանյութ օգտագործում են (C₃H₆)_n բանաձեւով սինթետիկ գծային պոլիօլեֆին:

Ապահովվում է դեմքի նյարդի կաթվածի դեպքում դեմքի շտկման եղանակի պարզեցումը եւ հուսալիության բարձրացումը, նկ. 1:

(51) (2006) (11) **1854** (13) **A2**
A61D 1/00
G01N 21/00

(21) AM20060006 (22) 20.01.2006
(42) 02.05.2006

(71) Յովհաննես Չավենի Նաղաշյան (AM), Մարիամ Արմենակի Մխիթարյան (AM)
(72) Յովհաննես Չավենի Նաղաշյան (AM), Մարիամ Արմենակի Մխիթարյան (AM)

(73) Յովհաննես Չավենի Նաղաշյան, Երեւան, Մ. Սարյան 33, բն. 34 (AM), Մարիամ Արմենակի Մխիթարյան, Երեւան, Ա. Խաչատրյան 26/3, բն. 88 (AM)

(54) **Խոշոր եղջերավոր անասունների հիպոդեմատոզի կանխարգելման եղանակ**

(57) Խոշոր եղջերավոր անասունի մաշկի դաբաղած կտորը ներծծում են նեոցիդոլի 60%-անոց լուծույթով, այնուհետեւ կարում այն անասունի պոչի հիմքի մաշկին արտաքինից եւ թողնում բուժերի թռիչքի ողջ շրջանում:

Բարձրանում է կանխարգելման արդյունավետությունը:

(51) (2006) (11) **1855** (13) **A2**
A61F 5/01

(21) AM20060083 (22) 19.05.2006
(42) 03.07.2006

(71) Արթուր Մկրտիչի Գալանտերյան (AM)
(72) Արթուր Մկրտիչի Գալանտերյան (AM), Արմեն Վաչագանի Այվազյան (AM), Վաչե Գեւորգի Յամբարձումյան (AM)
(73) Արթուր Մկրտիչի Գալանտերյան (AM)
(74) Է. Նահապետյան
(54) **Օրթոպեդիկ սարք**
(57) Գյուտը վերաբերում է վիրաբուժական սարքերին, մասնավորապես՝ սկոլիոզի բուժման սարքերին:

Օրթոպեդիկ սարքը տարբեր հաստություններով ակտիվ եւ պասսիվ շտկիչ հատվածներ ունեցող իրանակալ է: Ակտիվ հատվածներում սարքն ավելի հաստ է, քան պասսիվ հատվածներում: Իրանակալի արտաքին մակերեսային հարթ է:

Բարձրացվում է սարքի արդյունավետությունը, 1 նկ:

(51) (2006) (11) **1856** (13) **A2**
A61F 9/00

(21) AM20060047 (22) 29.03.2006
(42) 01.06.2006

(71) Յայկ Ազատի Մինասյան (AM)
(72) Յայկ Ազատի Մինասյան (AM)
(73) Յայկ Ազատի Մինասյան, Երեւան, Մամիկոնյանց 38, բն. 38 (AM)

(54) Աչքի հիվանդությունների բուժման բաղադրանյութ

(57) Բաղադրանյութը ներառում է գլուտամին, 1%-անոց գլիցերին, բորական թթու, մեթիլսուլֆոնիլմեթան, էթիլենտերկամինքառաքաղցախաթթու եւ մանրեագերծված ջուր, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, (գանգվ. %). գլուտամին 55.0, 1%-անոց գլիցերին 20.0, բորական թթու 20.0, մեթիլսուլֆոնիլմեթան 1.0, էթիլենտերկամինքառաքաղցախաթթու 0.5 եւ մանրեագերծված ջուր՝ մնացածը:

Ընդլայնվում է աչքի հիվանդությունների բուժման բաղադրանյութերի տեսականին:

(51) (2006) (11) **1857** (13) **A2**
A61K 31/505
A61K 33/00
A61K 36/00

(21) AM20060017 (22) 15.02.2006
(42) 02.05.2006

(71) Վահե Կարապետի Մկրտչյան (AM), Ալբերտ Վաղարշակի Մանասյան (AM)

(72) Վահե Կարապետի Մկրտչյան (AM), Ալբերտ Վաղարշակի Մանասյան (AM)

(73) Վահե Կարապետի Մկրտչյան, Երեւան, Նոր Արեշի 8-րդ փող. 55 (AM), Ալբերտ Վաղարշակի Մանասյան, Երեւան, Բաբայան 34, բն. 35 (AM)

(54) Թռչունների միզաթթվային դիաթեզի բուժման եւ/կամ կանխարգելման եղանակ

(57) Համաձայն հայտարկվող գյուտի, թռչուններին կերի հետ տալիս են հակապոդագրային պատրաստուկ՝ «Միլուրիտ», իսկ խմելու ջրի փոխարեն՝ նատրիումի հիդրոկարբոնատի 0,5%-անոց ջրային լուծույթ, որին ավելացնում են մաղաղանոսի 0,33%-անոց ջրաթուրմ:

Բարձրանում է թռչունների միզաթթվային դիաթեզի բուժման եւ/կամ կանխարգելման արդյունավետությունը:

(51) (2006) (11) **1858** (13) **A2**
A61K 35/32
A61K 35/16

(21) AM20060019 (22) 17.02.2006
(42) 02.05.2006

(71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Սիմոն Սամարչյան (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Սիմոն Սամարչյան (AM)

(73) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան 25/14, բն. 104 (AM), Սիմոն Սամարչյան, Երեւան, Մոսկովյան 28, բն. 87 (AM)

(54) Ծնոտների առամնաբնային ելունների կորցրած ծավալի վերականգնման եղանակ

(57) Ծնոտների առամնաբնային ելունների կորցրած ծավալը լրացնում են ապահանքայնացված ոսկրային մատրիքս եւ տրոմբոցիտներով հարուստ պլազմա ներառող խառնուրդով՝ բաղադրամասերի 1:1 ծավալային հարաբերակցությամբ: Որպես ապահանքայնացված ոսկրային մատրիքս օգտագործում են ապահանքայնացված ավրոգեն ոսկրային մատրիքս կամ ապահանքայնացված քսենոգեն ոսկրային մատրիքս:

Ապահովվում է ոսկրի բավարար վերականգնումը:

(51) (2006) (11) **1859** (13) **A2**
A61K 35/32
A61K 35/16

(21) AM20060018 (22) 17.02.2006
(42) 02.05.2006

(71) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Հայկ Հարությունյան (AM), Սիմոն Հայրապետյան (AM)

(72) Յուրի Պողոսյան (AM), Աննա Պողոսյան (AM), Հայկ Հարությունյան (AM), Սիմոն Հայրապետյան (AM)

(73) Յուրի Պողոսյան, Արարատի մարզ, Նոր Խարբերդ 10/14 (AM), Աննա Պողոսյան, Երեւան, Նալբանդյան 25/14, բն. 104 (AM), Հայկ Հարությունյան, Վանաձոր, Թումանյան 9ա, բն. 15 (AM), Սիմոն Հայրապետյան, Երեւան, Մուրացանի 114 (AM)

(54) Ոսկրերի հետվիրահատական խոռոչների վերացման եղանակ

(57) Ոսկրի խոռոչը լվանում են հականեխիչ լուծույթով եւ լրացնում ոսկրագոյացումը խթանող կյուլոս ու տրոմբոցիտներով հարուստ պլազմա ներառող խառնուրդով՝ բաղադրամասերի 1:1 ծավալային հարաբերակցությամբ, ընդ որում որպես ոսկրագոյացումը խթանող կյուլոս

օգտագործում են ապահանջայնացված ալոգեն ոսկրային մատրիքս կամ ապահանջայնացված քսենոգեն ոսկրային մատրիքս:

Կրճատվում է ոսկրագոյացման տեւողութիւնը:

(51) (2006) (11) **1860** (13) **A2**
A61K 36/00
A61P 3/10
 (21) AM20060057 (22) 07.04.2006
 (42) 03.07.2006
 (71) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան (AM), Անուշ Աղաջանյան (AM)
 (72) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան (AM), Անուշ Աղաջանյան (AM)
 (73) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան, Երեւան, Գայի պող. 4, բն. 86 (AM), Անուշ Աղաջանյան, Երեւան, Գայի պող. 4, բն. 86 (AM)
(54) Հակաշաքարախտային պատրաստուկ «Արմադ-2»
 (57) Հակաշաքարախտային պատրաստուկը ներառում է եղինջի վերգետնյա մասը, մատուտակի արմատ, վանադիլ սուլֆատ եւ 40%-անոց էթիլային սպիրտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). եղինջի վերգետնյա մասը՝ 1.2, մատուտակի արմատ՝ 1.2, վանադիլ սուլֆատ՝ 0.01 եւ 40%-անոց էթիլային սպիրտ՝ 97.59:
 Բարձրացվում է բուժման արդյունավետութիւնը:

(51) (2006) (11) **1861** (13) **A2**
A61K 36/00
 (21) AM20060056 (22) 07.04.2006
 (42) 03.07.2006
 (71) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան (AM), Մարիյա Մարտիրոսյան (AM)
 (72) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան (AM), Մարիյա Մարտիրոսյան (AM)
 (73) Արամայիս Խաչատուրի Աղաջանյան, Երեւան, Գայի պող. 4, բն. 86 (AM), Մարիյա Մարտիրոսյան, Երեւան, Կարախանյան 33, բն. 32 (AM)
(54) Հակալնդախտային պատրաստուկ «Դեսնիտ»
 (57) Հակալնդախտային պատրաստուկը ներառում է ակնամոմ, հալվելի հյութ եւ 40%-անոց

էթիլային սպիրտ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). ակնամոմ՝ 10.5, հալվելի հյութ՝ 5.3 եւ 40%-անոց էթիլային սպիրտ՝ 84,2:

Բարձրացվում է բուժման արդյունավետութիւնը:

(51) (2006) (11) **1862** (13) **A2**
A61M 5/32
 (21) AM20050108 (22) 27.11.2002
 (85) 20.06.2005
 (86) PCT/US2002/033034, 27.11.2002
 (87) WO2004/050138 17.06.2004
 (42) 01.03.2006
 (31) PCT/US2002/03 (32) 27.11.2002 (33) US
 (71) Ռետրաքտեյբլ Տեխնոլոջիզ, Ինքորպորեյթիդ (US)
 (72) Թոմաս Զ.Շոու (US), Ջուդի Ժու (US)
 (73) Ռետրաքտեյբլ Տեխնոլոջիզ, Ինքորպորեյթիդ (AM)
 (74) Ա. Գալոյան
(54) Ներերակային կաթետերի ներմուծման ուղղորդիչ (տարբերակներ) եւ դրա պատրաստման եղանակ
 (57) Ներերակային կաթետերի ներմուծման ուղղորդիչ, որն ունի ներքաշվող ասեղակալ եւ խողովակաձեւ սուզակ: Մինչեւ ներերակային կաթետերի ներարկումը եւ ներարկման ժամանակ խողովակաձեւ սուզակը գտնվում է նախընտրելի դիրքում եւ պահվում է մղլակով: Ներարկման ժամանակ մղլակը հետ է սեղմում խողովակաձեւ սուզակը՝ թույլ տալով, որ ասեղակալը մտնի խողովակաձեւ սուզակի մեջ սեղմման զսպանակի ուժով: Ասեղակալի ներքաշման ժամանակ խողովակաձեւ սուզակից օդը անցքով ծայրից արագ դուրս է մղվում: Ասեղակալն ունի ընդարձակված խուց, որի ներքին խոռոչը կարելի է դիտել ոչ ավելի, քան երկու շերտ թափանցիկ պլաստիկների միջով: Պատյանի վրա գտնվում են բազմաթիվ լայնորեն ցցվող ելուստներ, որոնք հեշտացնում են մի ձեռքով սարքով աշխատելը: Առաջարկվում են ներերակային կաթետերի ներմուծման ուղղորդիչ տարբերակներ: Սարքի պատրաստման եղանակը նույնպես հայտարկվում է :
 Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 7 անկախ կետ, 6 նկ.:

(51) (2006) (11) **1863** (13) **A2**
A63F 3/00

(21) AM20060080 (22) 11.05.2006
(42) 03.07.2006

(71) Ներսես Յրաջյայի Ներսիսյան (AM)
(72) Ներսես Յրաջյայի Ներսիսյան (AM)
(73) Ներսես Յրաջյայի Ներսիսյան (AM)
(74) Ռ. Զալաշյան

(54) Սեղանի խաղ սարքի

(57) Գյուտը վերաբերում է սեղանի խաղերին, մասնավորապես՝ երեք խաղացողով սարքի խաղին:

Խաղն ունի իրար հողակապերով միակցված երեք հավասար հատվածներից կազմված խաղատախտակ, որոնցից յուրաքանչյուրը եզրագծով ունի կողիկներ եւ յուրաքանչյուր կարճ կողմի երկայնքով՝ վեց կայան: Խաղատախտակի յուրաքանչյուր հատվածն իրականացված է մեկ ընդհանուր գազաթով երկու հավասար ուղղանկյունների հարակից երկար կողմերի միջեւ 120° անկյան տակ վերադրումից առաջացած վեցանկյան տեսքով, որի յուրաքանչյուր առավելագույն երկար կողմը կիպ կպած է մյուս վեցանկյան առավելագույն երկար կողմին: Երկու հատվածները հողակապերով միակցված են երրորդի հետ դրա վրա հակառակ ուղղություններով ծավվելու հնարավորությամբ: Խաղի համար անհրաժեշտ են գառեր եւ յուրաքանչյուր խաղացողի համար գույնով կամ տեսողականորեն իրարից տարբերվող տասնհինգական խաղաքար:

Ընդլայնվում են խաղի ֆունկցիոնալ հնարավորությունները, 4 նկ.:

(51) (2006) (11) **1864** (13) **A2**
B01D 53/50
C01C 1/247

(21) AM20060091 (22) 08.06.2006
(42) 03.07.2006

(71) Ժորա Յրաջի Ղուկասյան (AM)
(72) Վիլենա Յակոբի Մարտիրոսյան (AM), Աշոտ Ասքանազի Զոչինյան (AM)
(73) Ժորա Յրաջի Ղուկասյան, Երեւան, Վարդանանց 22, բն. 99 (AM)

(54) Արտադրական ծխագազերից ծծմբի երկօքսիդի կորզման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մետալուրգիային,

մասնավորապես՝ մետալուրգիական գործարանների սուլֆիդային հանքանյութերի թրծման վառարաններից արտանետվող ծխագազերից ծծմբի երկօքսիդի կորզման եղանակներին:

Կորզումն իրականացնում են ամոնիակով, թթվածնի եւ ջրային գոլորշիների միջավայրում եւ ստանում ամոնիումի սուլֆատ: Ծխագազերը կորզումից առաջ նախապես սառեցնում են մինչեւ 40-60°C ջերմաստիճան, իսկ կորզումը կատարում են մեկ փուլով, գազային ֆազում ծխագազերի, ամոնիակի գոլորշիների, թթվածնի եւ ջրային գոլորշիների զանգվածային (0.30-12):(0.11-4.25):(0.05-2.0):(0.06-2.25) հարաբերակցության պայմաններում:

Պարզեցվում է եղանակը եւ ապահովվում ծծմբի երկօքսիդի կորզման բարձր աստիճանը:

(51) (2006) (11) **1865** (13) **A2**
B02C 18/06

(21) AM20060011 (22) 30.01.2006
(42) 02.05.2006

(71) Յակոբ Կարապետի Բարսեղյան (AM)
(72) Յակոբ Կարապետի Բարսեղյան (AM)
(73) Յակոբ Կարապետի Բարսեղյան, Գյումրի, Արագած 6-րդ թաղամաս 2, բն. 11 (AM)

(54) Կենտրոնախույս աղաց

(57) Գյուտը վերաբերում է պտտվող դանակներով մանրացնող աղացներին:

Աղացն ունի համառանցք դասավորված բունկեր, դրա տակ տեղադրված աղացման խուլց՝ պտտման շարժաբերի հետ կապված կտրիչ դանակով, եւ բեռնաթափման համակարգ: Բունկերի ելքային անցքում տեղադրված է պարուրակային փոխակրիչ, որի պտտման դանդաղընթաց շարժաբերը գտնվում է բունկերի կափարիչի վրա: Աղացման խուլցը կիսազնդած է: Դրա հատակն ունի շրջանագծով համաչափ դասավորված սեկտորի ձեւ ունեցող անցքեր: Բեռնաթափման համակարգը թեք հատակով օղակած է ճոռ է եւ տեղադրված է աղացման խցի հատակի տակ: Այն ունի աղացման խցի հատակի անցքերին համապատասխան ինքնափակվող դռներ, որոնք ունեն հատակի նկատմամբ զսպանակավոր ծինիներ եւ կապված են էլեկտրամագնիսների խարիսխներին:

Ապահովվում է հումքի մատուցման կարգավորումը եւ ավտոմատացվում է մանրացված զանգվածի բեռնաթափումը, 3 նկ.:

- (51) (2006) (11) **1866** (13) **A2**
B22F 3/20
- (21) AM20060049 (22) 29.03.2006
(42) 01.06.2006
(71) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Գեորգ Լյուդվիկի Պետրոսյան (AM), Մարատ Բազրատի Սաֆարյան (AM), Յրաչյա Յրանտի Խաչատրյան (AM), Վարդան Գեորգի Պետրոսյան (AM)
(73) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)
- (54) **Փոքր տրամագծով նրբապատ խողովակների պատրաստման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը: Չամաձայն փոքր տրամագծով նրբապատ խողովակների պատրաստման եղանակի խողովակի մամլման համար օգտագործում են ներքեից փակ խողովակածեև նախապատրաստվածք: Նախապատրաստվածքի խոռոչը լցնում են հալված դյուրահալ մետաղից կամ համահալվածքից դեֆորմացվող միջուկով, ապա այն սառեցնում են: Այնուհետև նախապատրաստվածքը կոնական մամլամայրով սառը վիճակում մամլում են, ապա կտրում են ստացված միջուկով խողովակի փակ ծայրը: Յետո խողովակի միջուկը հեռացնում են՝ տաքացնելով խողովակը մինչև միջուկի հալման ջերմաստիճանը:
Պարզեցվում է նրբապատ խողովակների պատրաստման տեխնոլոգիան, 4 նկ.:
-
- (51) (2006) (11) **1867** (13) **A2**
B23B 1/00
- (21) AM20060025 (22) 21.02.2006
(42) 03.07.2006
(71) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Յենրիկ Բուրթելի Բաղդասարյան (AM), Վահե Յենրիկի Բաղդասարյան (AM), Սամվել Սերյոժայի Յայրումյան (AM)
(73) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

- (54) **Մետաղների կտրման ռեժիմների եւ կտրիչի երկրաչափական պարամետրերի լավագույն միջակայքերի որոշման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը: Եղանակի համաձայն ընտրում են սեւ եւ գունավոր մետաղների համար բազային մետաղներ, որոնց համար որոշում են թրթռման պարամետրերը, կտրման ռեժիմների ու կտրիչի երկրաչափական պարամետրերը եւ կառուցում կախվածության գրաֆիկները: Գրաֆիկների հիման վրա բազային մետաղների համար որոշում են կտրման ռեժիմների եւ կտրիչի երկրաչափական պարամետրերի լավագույն միջակայքերը: Որոշում են բազային եւ հետազոտվող մետաղների սահմանային լարումները, ապա միջակայքերի գնահատման գործակցով որոշում հետազոտվող նյութերի համար լավագույն միջակայքերը:
Պարզեցվում է եղանակը , 5 նկ.:
-
- (51) (2006) (11) **1868** (13) **A2**
B65G 21/20
B65G 17/00
- (21) AM20060037 (22) 10.03.2006
(42) 01.06.2006
(71) Բելլա Վազգենի Բաբայան (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM), Ալեքսանդր Արմենի Վանյան (AM)
(72) Բելլա Վազգենի Բաբայան (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան (AM), Աննա Արմենի Վանյան (AM), Ալեքսանդր Արմենի Վանյան (AM)
(73) Բելլա Վազգենի Բաբայան, Երևան, Աբելյան 9, բն. 22 (AM), Վազգեն Սեւոյի Բաբայան, Երևան, Աբելյան 9, բն. 22 (AM), Աննա Արմենի Վանյան, Երևան, Օրբելի եղբայրների 4, բն. 8 (AM), Ալեքսանդր Արմենի Վանյան, Երևան, Օրբելի եղբայրների 4, բն. 8 (AM)
- (54) **Քարհավաք մեքենայի զատիչ փոխակրիչ**
- (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը:
Քարհավաք մեքենայի զատիչ փոխակրիչն ունի շրջանակ, դրան ամրակցված վերին տալոդ եւ ստորին տարվող լիսեռներ իրենց՝ երկուական աստղանիվներով, ինչպես նաեւ զատիչ օղակներ: Չատիչ օղակներն իրենց մեկ կողմով հողակապորեն ամրակցված են իրար

զուգահեռ շարժվող, հենամատներ ունեցող երկու քարշիչ շղթաներին՝ սեփական քաշի տակ ուղղաձիգ դիրք ընդունելու հնարավորությամբ: Չատիչ օղակները մեկընդմեջ իրենց հակադիր կողմին ունեն կառչաններ: Շրջանակի վերին մասին ամրակցված է վերին աստղանիվներից մեկը բացակով պարուրող աղեղածե սահմանափակիչ, ընդ որում սահմանափակիչի աղեղի անկյունը մոտ 180 աստիճան է: Աստղանիվի վերին կետի եւ սահմանափակիչի միջեւ բացակը նվազագույնն է եւ բավարար է կառչաններն անցնելու համար, իսկ աստղանիվի ստորին կետի եւ սահմանափակիչի միջեւ բացակը առավելագույնն է եւ բավարար է զատիչ օղակների ուղղաձիգ դիրքով անցնելու համար: Չատիչ օղակների մուտքային 90 աստիճան դարձի սահմաններում բացակի մեծությունը անփոփոխ է, իսկ ելքային 90 աստիճան դարձի սահմաններում այն աստիճանաբար լայնանում է մինչեւ առավելագույն չափը:

Բարձրացվում է զատիչ փոխակրիչի աշխատանքի հուսալիությունը եւ երկարակեցությունը, 1 նկ.:

-
- (51) (2006) (11) **1869** (13) **A2**
C01F 5/00
C04B 2/00
 - (21) AM20050189 (22) 05.10.2005
 - (42) 02.05.2006
 - (71) Յոզիաննետ Յոզիաննիսյան (AM)
 - (72) Յոզիաննետ Յոզիաննիսյան (AM), Վալերի Քոչարյան (AM), Վլադիմիր Գասպարյան (AM)
 - (73) Յոզիաննետ Յոզիաննիսյան (AM)
 - (74) Ա. Պետրոսյան
 - (54) **Գերհիմնային ապարների մշակման եղանակ**
 - (57) 10-50% մագնեզիումի կարբոնատ պարունակող գերհիմնային ապարների կարբոնատացված մասը մանրացնում են մինչեւ մասնիկների 4 մմ չգերազանցող չափերը, ջրային զատմամբ անջատում մասնիկների 0,15 մմ-ից փոքր չափեր ունեցող եւ 90%-ից ավելի մագնեզիումի կարբոնատ պարունակող չափամասը, չորացնում այն եւ ենթարկում ջերմային մշակման 500-1600°C ջերմաստիճանում՝ ստանալով մագնեզիումի օքսիդ: Ապարից կարբոնատացված մասի անջատումից հետո մնացած չկարբոնատացված

մասը ենթարկում են քիմիական ակտիվացման նատրիումի հիպոքլորիտով 25-55°C ջերմաստիճանում, ապա կարբոնատացնում ածխածնի երկօքսիդով, ստացված խառնուրդը բաժանում են պինդ եւ հեղուկ չափամասերի, վերջինից անջատում են մետաղների իոնները, իսկ պինդ չափամասից՝ սիլիցիումի երկօքսիդը եւ մագնեզիումի կարբոնատը, որի ջերմային մշակմամբ ստանում են մագնեզիումի օքսիդը:

Ապահովվում է ապարների համակողմանի անթափոն մշակումը:

-
- (51) (2006) (11) **1870** (13) **A2**
C01F 5/00
C04B 2/00
 - (21) AM20050187 (22) 29.09.2005
 - (42) 03.04.2006
 - (71) Յոզիաննետ Յոզիաննիսյան (AM)
 - (72) Յոզիաննետ Յոզիաննիսյան (AM), Վալերի Քոչարյան (AM), Վլադիմիր Գասպարյան (AM)
 - (73) Յոզիաննետ Յոզիաննիսյան, Երեւան, Ծովակալ Իսակովի պող. 4, բն.18 (AM)
 - (54) **Մագնեզիումի օքսիդի ստացման եղանակ**
 - (57) 10-50% մագնեզիումի կարբոնատ պարունակող գերհիմնային ապարների կարբոնատացված մասը մանրացնում են մինչեւ մասնիկների 4 մմ չգերազանցող չափերը, ջրային զատմամբ անջատում մասնիկների 0,15 մմ-ից փոքր չափեր ունեցող եւ 90%-ից ավելի մագնեզիումի կարբոնատ պարունակող չափամասը, չորացնում այն, որից հետո ենթարկում են ջերմային մշակման 500-1600°C ջերմաստիճանում՝ ստանալով մագնեզիումի օքսիդ, ընդ որում ջերմային մշակման ընթացքում անջատված ածխածնի երկօքսիդը ուղղում են էլանյութի չկարբոնատացված մասի վրա:
Պարզեցվում է եղանակը:

-
- (51) (2006) (11) **1871** (13) **A2**
C01F 7/00
 - (21) AM20060045 (22) 28.03.2006
 - (42) 01.06.2006
 - (71) Սլավա Երվանդի Ներսիսյան (AM)
 - (72) Յարություն Գրիշայի Մուրադյան (AM), Սլավա Երվանդի Ներսիսյան (AM), Յենրիկ Եղիշեի

Ոսկանյան (AM), Խաչիկ Վազգենի Սարգսյան (AM), Կիմ Եղիշեի Աբելյան (AM), Սաթենիկ Աշոտի Խառատյան (AM)

(73) Սլավա Երվանդի Ներսիսյան, Երեւան, Գալի պող. 2, բն.118 (AM)

(54) Ալյումինի հիդրօքսիդի դոնորդի ստացման եղանակ (տարբերակներ)

(57) Ըստ ալյումինի հիդրօքսիդի դոնորդի ստացման եղանակի 1-ին տարբերակի պատրաստում են ալյումակալիումային շիբի ջրային լուծույթ, հաջորդաբար փոխարկում այն ալյումամոնիումային աղի լուծույթի՝ անցկացնելով այն NH4⁺ ձեւի KY-2x8 մակնիշի կատիոնափոխանակման խեժով լցված աշտարակի միջով, ապա ալյումինի հիդրօքսիդի դոնորդի՝ ամոնիակային ջրի հետ փոխազդեցությամբ դոնորդը մշակում են աղազերծված ջրով մինչեւ սուլֆատ իոնների բացակայումը:

Ըստ 2-րդ տարբերակի պատրաստում են ալյումակալիումային շիբի ջրային լուծույթ, փոխարկում այն ալյումամոնիումային աղի լուծույթի՝ անցկացնելով NH4⁺ ձեւի KY-2x8 մակնիշի կատիոնափոխանակման խեժով լցված աշտարակի միջով, ապա ալյումինի հիդրօքսիդի դոնորդի՝ անցկացնելով ալյումամոնիումային աղի լուծույթը անիոնափոխանակման խեժով լցված աշտարակի միջով, դոնորդը մշակում են աղազերծված ջրով մինչեւ սուլֆատ իոնների բացակայումը, ընդ որում անիոնափոխանակման խեժը AB-17-OH⁻, AH-31 կամ ՅՃԳ-10Յ մակնիշի խեժ է:

Պարզեցվում է եւ ինտենսիվացվում եղանակը, 2 անկախ կետ:

(51) (2006) (11) 1872 (13) A2
C03C 3/12

(21) AM20060058 (22) 10.04.2006
(42) 02.05.2006

(71) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Մարինե Չաքարի Պետրոսյան (AM), Սիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM), Կոստան Արտավազդի Կոստանյան (AM)

(73) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Ապակի

(57) Գյուտը վերաբերում է դյուրահալ ապակիների բաղադրանյութերին եւ կարող է օգտագործվել միկրոէլեկտրոնիկայում:

Ապակին պարունակում է հետեւյալ բաղադրամասերը, գանգվ.%. վանադիումի օքսիդ՝ 60.90 - 52.71, բորի օքսիդ՝ 4.17-14.80, բարիումի օքսիդ՝ 20.60 - 36.22, բարիումի ֆտորիդ՝ 3.20 - 4.80, ալյումինիումի օքսիդ՝ 0.5 - 2.1:

Իջեցվում է ապակու եփման ջերմաստիճանը եւ բարձրացվում տեսակարար էլեկտրահաղորդականությունը:

(51) (2006) (11) 1873 (13) A2
C05G 3/00
C05G 5/00

(21) AM20060086 (22) 05.06.2006
(42) 03.07.2006

(71) Ալբերտ Բրուտյան (AM)

(72) Ալբերտ Բրուտյան (AM)

(73) Ալբերտ Բրուտյան, Երեւան, Կոմիտասի 24, բն.3 (AM)

(54) Ցեոլիթ պարունակող հատիկավորված հանքային պարարտանյութի ստացման եղանակ

(57) Ցեոլիթը մանրացնում են մինչեւ մասնիկների 0,5 - 1,0մմ չափը, ապա 30-40 րոպեի ընթացքում չորացնում 500-600°C ջերմաստիճանում, չորացումից հետո այն աղում են մինչեւ մասնիկների 0,14-0,15մմ չափը: Սնուցիչ նյութը առանձին աղում են մինչեւ մասնիկների 0,14-0,15մմ չափը: Ցեոլիթը եւ սնուցիչ նյութը խառնում են, հատիկավորում գնդավորման եղանակով խառնուրդի խոնավացման միջոցով, չորացնում ստացված պարարտանյութի հատիկները եւ գատում պահանջվող չափի հատիկները: Որպես սնուցիչ նյութ վերցնում են ամֆոս կամ նիտրամոֆոսկա կամ կալիումի ֆոսֆատ կամ դրանց խառնուրդը: Բարձրացվում է ցեոլիթի ակտիվությունը եւ հետեւաբար՝ պարարտանյութի օգտագործման ժամկետը:

(51) (2006) (11) 1874 (13) A2
C07C 217/00
C07C 213/00

(21) AM20060031 (22) 23.02.2006
(42) 03.04.2006

(71) «Ֆարմագեվ» ՍՊԸ (AM)
 (72) Գեւորգ Կամիսարի Հայրապետյան (AM)
 (73) «Ֆարմագեվ» ՍՊԸ, Երեւան, Արաբկիրի 17-րդ փող.25, բն.22 (AM)
 (54) **1-Ֆենօքսի-3-[N-(1-մեթիլ-3- ֆենիլ)պրոպիլ]ամինա-2-պրոպանոլի հիդրոքլորիդի ստացման եղանակ**
 (57) Համամոլեկուլային քանակություններով վերցված ֆենիլիզոբուտիլամինը եւ 1-ֆենօքսի-2,3-էպօքսիպրոպանը 75-80°C ջերմաստիճանում ենթարկում են փոխազդեցության իզոպրոպանոլի միջավայրում, ստացված միջակայալ արգասիքը՝ 1-ֆենօքսի-3-[N-(1-մեթիլ-3- ֆենիլ)պրոպիլ]ամինա-2-պրոպանոլը, փոխարկում են հիդրոքլորիդի 33-36%-անոց աղաթթվով:
 Պարզեցվում է եղանակը եւ ապահովվում որա անվտանգությունը:

(51) (2006) (11) 1875 (13) A2
C08G 85/00
 (21) AM20060059 (22) 10.04.2006
 (42) 02.05.2006

(71) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան (AM)
 (72) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան (AM), Նորայր Մանվելի Բեյլերյան (AM), Սվետլանա Հակոբի Ափոյան (AM), Ջիլդա Դրաստամատի Գրիգորյան (AM)
 (73) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան, Երեւան, Կոմիտասի 36, բն. 2 (AM)
 (54) **Ջլորոպրենի եւ վինիլացետատի համապոլիմերի ստացման եղանակ**
 (57) Հայտարկված է ջլորոպրենի եւ վինիլացետատի համապոլիմերի ստացման եղանակ, ըստ որի մոնոմերները՝ ջլորոպրենը եւ վինիլացետատը մաքրում են, օքսիդացնում թթվածնով, ապա օքսիդացված վինիլացետատի եւ ջլորոպրենի խառնուրդը ենթարկում ռադիկալային համապոլիմերացման, ընդ որում համապոլիմերացումը խթանում են մոնոմերների խառնուրդի ճառագայթահարումով հինգ րոպե՝ սնդիկային լամպի ճառագայթումով:
 Պարզեցվում է համապոլիմերացման եղանակը:

(51) (2006) (11) 1876 (13) A2
C09J 109/00
C09J 111/00
 (21) AM20060060 (22) 10.04.2006
 (42) 02.05.2006
 (71) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան (AM)
 (72) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան (AM), Նորայր Մանվելի Բեյլերյան (AM), Սվետլանա Հակոբի Ափոյան (AM), Ջիլդա Դրաստամատի Գրիգորյան (AM)
 (73) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան, Երեւան, Կոմիտասի 36, բն. 2 (AM)
 (54) **Սոսնձային բաղադրանյութ**
 (57) Հայտարկված է սոսնձային բաղադրանյութ, որը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, գանգվ.%. քլորոպրենի եւ վինիլացետատի համապոլիմեր՝ 11.7, 1.5-երկամիակապրոնաթուն՝ 0.1, տիուրամ՝ 0.2, ցինկի օքսիդ՝ 2.3, ինդենկումարային խեժ՝ 5.3, քլորնաիրիտ (քլորացված պոլիքլորոպրեն)՝ 2.9, բենզին «Գալոշա»՝ 38.5 եւ էթիլացետատ՝ 38.5:
 Բարձրացվում են բաղադրանյութի հարակցական եւ սոսնձող հատկությունները:

(51) (2006) (11) 1877 (13) A2
C12N 1/20
 (21) AM20060067 (22) 25.04.2006
 (42) 01.06.2006
 (71) Սիլվա Համբարձումի Գաբրիելյան (AM)
 (72) Սիլվա Համբարձումի Գաբրիելյան (AM)
 (73) Սիլվա Համբարձումի Գաբրիելյան, Երեւան, Անդրանիկի 111, բն. 52 (AM)
 (54) **Կորինբակտերիաների ցիստինազային ակտիվության որոշման Պիզուի ձեւափոխված միջավայր**
 (57) Գյուտը վերաբերում է կլինիկական մանրէաբանությանը, մասնավորապես՝ դիֆթերիայի հարուցիչների ցիստինազային ակտիվության որոշման սնուցիչ միջավայրերին եւ կարող է կիրառվել դիֆթերիայի ճշգրիտ ախտորոշման համար:
 Հայտարկվող միջավայրը հայտնի Պիզուի միջավայրի ձեւափոխված տարբերակն է եւ ներառում է Սյուլեր-Հինտոնի ազարային հիմք, L-ցիստինի նատրիումի հիդրոկարբոնատային լուծույթ, քացախաթթվային կապար, նատրիումի թիոսուլֆատ եւ ձիու արյան շիճուկ:

Բարձրացվում է դիֆթերիայի հարուցիչի ախտորոշման արդյունավետությունը:

(51) (2006) (11) **1878** (13) **A2**
C21D 9/22
C21D 1/78
(21) AM20060038 (22) 10.03.2006
(42) 02.05.2006

(71) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Սուրեն Գեւորգի Աղբալյան (AM), Աննա Արսենի Պետրոսյան (AM)

(73) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) **Ոչ ջերմակայուն գործիքային պողպատներից պատրաստված գործիքների ջերմացիկիկ մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մետաղագործությանը, մասնավորապես՝ պողպատների ջերմային մշակմանը եւ կարող է օգտագործվել մեքենաշինությունում գործիքների պատրաստման ժամանակ:

Ոչ ջերմակայուն գործիքային պողպատից պատրաստված գործիքը ենթարկում են բազմակի ջերմացիկիկ տաքացման, որը իրականացնում են չորսից ոչ պակաս ցիկլերով: Յուրաքանչյուր ցիկլում տաքացումը կատարում են պեռլիտ-աուստենիտ փոխակերպության ջերմաստիճանից 80-100°C բարձր ջերմաստիճաններում եւ պահում այդ ջերմաստիճանում 1,0-1,5 րոպե: Յուրաքանչյուր տաքացումից հետո իրականացնում են սառեցում օդում 150-170°C/վրկ արագությամբ մինչեւ աուստենիտ-պեռլիտ փոխակերպության ջերմաստիճանից 80-100°C ցածր ջերմաստիճաններ, իսկ վերջին ցիկլում սառեցումը կատարում են ՄՄՄԱ-Մ մակնիշի քլորոպրենի համապոլիմերային լատեքսի 1,0-3,0%-անոց ջրային լուծույթում, ապա իրականացնում են արձակում 160-200°C ջերմաստիճանում:

Կրճատվում է մշակման տեւողությունը եւ բարձրացվում են պատրաստվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները:

(51) (2006) (11) **1879** (13) **A2**
E21C 41/26
(21) AM20060079 (22) 10.05.2006

(42) 03.07.2006

(71) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ (AM)

(72) Էդիկ Սարգսյան (AM), Սահակ Արզումանյան (AM), Լեւոն Մանուկյան (AM)

(73) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ, Երեւան, Խանջյան 19 (AM)

(54) **Լեռնալանջերի վրա բազմաստիճան լցակույտի ձեւավորման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է լեռնահանքային արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել բաց լեռնային աշխատանքներում, ինչպես նաեւ ճանապարհաշինության մեջ լցակույտերի եւ լիրաթմբերի կառուցման ժամանակ:

Եղանակը կայանում է նրանում, որ լցակույտի մեկ կամ միաժամանակ երկու թելերում ամուր ապարներից ձեւավորում են աշխատանքային հարթակներ, զարգացնում են դրանք լցակույտի հակառակ թելի ուղղությամբ՝ լեռնալանջի եւ ամուր ապարներից ձեւավորվող հարթակների միջեւ ազատ տարածություն թողնելով: Լցակույտի աստիճանների վերջնական ձեւավորումն իրականացնում են ներքեւից վերեւ՝ ազատ տարածությունները թույլ կապակցող ապարներով լցնելով: Ամուր ապարներից ձեւավորված շերտը զարգացնում են գազաթով դեպի լեռնալանջն ուղղված սեպածեւ լիրաթմբերի տեսքով: Թույլ կապակցող ապարները լցնում են լիրաթմբերով եւ լեռնալանջով ձեւավորված դատարկ տարածությունների մեջ: Լցակույտի յուրաքանչյուր հաջորդ աստիճանը ձեւավորելիս սեպածեւ լիրաթմբերը լցակույտերի թելերի ուղղությամբ տեղաշարժում են լիրաթմբերի լայնության կեսի չափով:

Բարձրացվում է լցակույտերի կայունությունը, 8 նկ.:

(51) (2006) (11) **1880** (13) **A2**
E21C 41/26
(21) AM20060062 (22) 19.04.2006
(42) 01.06.2006

(71) «Չայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Գրիգորի Ալեքսանդրի Առաքելով (AM), Սրայիոն Գեւորգի Յովսեփյան (AM)

(73) «Չայաստանի պետական ճարտարագիտա-

կան համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM) (54) **Խոր բացահանքերի ոչ աշխատանքային կողերի ձեւավորման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է լեռնային արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել թեք եւ գառիթափ անկում ունեցող հանքավայրերի բաց մշակման ժամանակ:

Եղանակը կայանում է նրանում, որ բացահանքի կողի վերին մասից փլուզման պրիզմագոյացնող մակաբացման ապարների աստիճանաբար հեռացման եւ ներքեւի մասում հենման պրիզմայի ստեղծման միջոցով ձեւափոխում են կողի հաշվարկային պրոֆիլը: Կողը ձեւավորում են երկնիստ բեկյալ պրոֆիլով, իսկ փլուզման պրիզմագոյացնող մակաբացման ապարների աստիճանաբար հեռացումն իրականացնում են փլուզման պրիզմայի ողջ լայնության ընդգրկմամբ:

Բարձրացվում է կողերի կայունությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1881** (13) **A2**
F02B 1/00

(21) AM20060068 (22) 25.04.2006
(42) 03.07.2006

(71) Արման Յովհաննիսյան (AM)
(72) Արման Յովհաննիսյան (AM)
(73) Արման Յովհաննիսյան, Երևան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)

(54) **Ներքին այրման շարժիչ**

(57) Շարժիչն ունի գլան, միաց եւ ելքի լիսեռ: Ելքի լիսեռին կոշտ ամրակցված են իրարից 120° անկյան տակ տեղակայված երեք սևամեջ շարժաթել, իսկ յուրաքանչյուր շարժաթելի մեջ տեղադրված է միացին միակցված գսպանակած ձող: Միացը պտտվում է ձվածեւ, տորի տեսք ունեցող խոռոչի մեջ եւ կազմված է անշարժ եւ շարժուն հատվածամասերից: Միացի անշարժ հատվածամասում տեղակայված է գլանը, որտեղ տեղակայված է գսպանակ, որի ծայրը միակցված է միացի շարժուն հատվածամասին: Միացի անշարժ հատվածամասն իր կողմնային մակերեսային ունի պատուհանիկներ, իսկ վերին մասում՝ վառելիքի աղբյուրին միակցված վառելիքի մատուցման սևամեջ գլան իր փականով: Միացի շարժուն հատվածամասն իր վերին մասում

ունի վառելիքի մատուցման գլանի մեջ մտնելու հնարավորություն ունեցող ձող, իսկ միացի անշարժ հատվածամասն իր հետին մասում ունի գսպանակած փական: Ձվածեւ խոռոչն իր մակերեսային ունի խոռոչի մեջ օդի ներթափանցման եւ խոռոչից այրված գազերի հեռացման պատուհանիկներ, ինչպես նաեւ ունի այրված գազերի հեռացման կողմնային փորվածք եւ գսպանակած լեզվակ ունեցող կողմնային փորվածք, ընդ որում լեզվակը տեղակայված է խոռոչի մեջ եւ կապված վառելիքի մատակարարման աղբյուրի հետ:

Բարձրացվում է ՕԳԳ-ն, 12 նկ.:

(51) (2006) (11) **1882** (13) **A2**
F03B 13/00

(21) AM20060033 (22) 27.02.2006
(42) 02.05.2006

(71) Յրանտ Սեֆերյան (AM), Երվանդ Սեֆերյան (AM)
(72) Յրանտ Սեֆերյան (AM), Երվանդ Սեֆերյան (AM)
(73) Յրանտ Սեֆերյան, Երևան, Ֆրունզեի 18, բն.59 (AM), Երվանդ Սեֆերյան, Երևան, Ֆրունզեի 18, բն.59 (AM)

(54) **Յիդրոշարժիչ**

(57) Գյուտը վերաբերում է հիդրո - եւ հողմաէներգետիկայի բնագավառներին եւ կարող է կիրառվել ալիքային կամ հողմային էներգիայով աշխատող շարժիչներում:

Յիդրոշարժիչն ունի գեներատոր, ուղղաձիգ լիսեռ, որին հորիզոնական շառավղայնություն ունեցող թելերով ամրակցված են թիակներ: Թիակները կատարված են գլանի 1/4 մասի տեսքով եւ կախված են թելերից ծխնիներով: Գլանի շրջանից դեպի դուրս թիակների դարձն արգելակելու համար թելերի վրա տեղակայված են սահմանափակիչներ: Սահմանափակիչները տեղակայված են թելերի վրա:

Պարզեցվում է հիդրոշարժիչի կառուցվածքը, նվազեցվում թիակների դիմադրությունը հետդարձի ժամանակ, 2 նկ.:

(51) (2006) (11) **1883** (13) **A2**
F03B 13/00

(21) AM20060053 (22) 05.04.2006

- (42) 03.07.2006
- (71) Հակոբ Սուրենի Մալխասյան (AM), Արման Խաչատրյան (AM)
- (72) Հակոբ Սուրենի Մալխասյան (AM), Արման Խաչատրյան (AM)
- (73) Հակոբ Սուրենի Մալխասյան, Երեւան, «Մայակ» թաղամաս 34, բն. 21 (AM), Արման Խաչատրյան, Երեւան, «Մայակ» թաղամաս 34, բն. 7 (AM)
- (54) **Հիդրոէներգետիկական կայանք**
- (57) Գյուտը վերաբերում է հիդրոէներգետիկական սարքավորումներին:

Հիդրոէներգետիկական կայանքն ունի շարժական հենահարթակին կոշտ ամրակցված ռոտոր, դրա հետ համագործակցող պոմպ, որը խողովակաշարի օգնությամբ միակցված է բարձունքի վրա գտնվող ջրավազանի հետ, եւ հիդրոտուրբին, ընդ որում խողովակաշարի պոմպին միակցված հատվածամասը ռետինե ճկափող է: Ռոտորն իրականացված է երկու սննդատուփերի տեսքով: Յուրաքանչյուր սննդատուփի լիսեռը ուղղահայաց է ջրի մակերեսին, իսկ լիսեռին ամրակցված են իրարից հավասար անկյան տակ գտնվող հինգ թիակներ, ընդ որում թիակի կապը լիսեռի հետ շարժուն է: Լիսեռի շուրջը տեղակայված է օղակաձեւ բռունցք: Թիակն ունի իր ծայրամասին կոշտ ամրակցված կալունակ, իսկ կալունակին շարժուն ամրակցված հոլովակը գլորվելու հնարավորություն ունի օղակաձեւ բռունցքի վրայով: Օղակաձեւ բռունցքն ունի ջրի հետ թիակների հպումն ապահովող եւ դա բացառող հատվածամասեր, ընդ որում ջրի հետ թիակների հպումն ապահովող հատվածամասը թրթուրավոր շղթա է:

Բարձրացվում է կայանքի հզորությունը, 5 նկ.:

-
- (51) (2006) (11) **1884** (13) **A2**
F04F 1/00
 - (21) AM20050201 (22) 09.11.2005
 - (42) 03.04.2006
 - (71) Մարտուն Անուշավանի Սահակյան (AM)
 - (72) Մարտուն Անուշավանի Սահակյան (AM)
 - (73) Մարտուն Անուշավանի Սահակյան, Երեւան, Գրիբոյեդովի 5, բն.31 (AM)
 - (54) **Ջրավազանից ջրի վերստի վերադարձնող սարք**
 - (57) Գյուտը վերաբերում է ջրամատակարարմանը, մասնավորապես՝ տարբեր ջրավազան-

ներից ջրի վերստի վերադարձնող, եւ կարող է կիրառվել գյուղատնտեսական հողատարածքների ոռոգման գործընթացում:

Ջրավազանից ջրի բարձրացման սարքն ունի ջրավազանում ամրակցված եւ նրա մակերեսից ուղղահայաց վեր բարձրացող հենարան, դրան երկու կողմից ամրակցված հաղորդակից ներթողման եւ արտածման մետաղական խողովակներ, որոնցից ներթողման խողովակները եւ արտածման խողովակների ստորին մասերը տեղակայված են ջրի մակերեսից ցածր: Արտածման խողովակների վերին մասում տեղակայված է ջրակուտակիչ տարրություն: Ջրավազանի մակերեսից վեր՝ հենարանի կանգնակների միջեւ գտնվող տախտակամածին տեղակայված է դիգելային շարժիչ, որին լծակների միջոցով ամրակցված են երկու ծանրոց, որոնք մեկ ձախից, մեկ աջից իջնում են ներթողման խողովակների ջրի մակերեսին: Ծանրության ճնշման տակ արտածման խողովակի միջով ջուրը վեր է մղվում դեպի ջրամբար:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ.:

-
- (51) (2006) (11) **1885** (13) **A2**
F16J 15/00
 - (21) AM20060005 (22) 12.01.2006
 - (42) 03.04.2006
 - (71) Գեւորգ Գրիգորի Մարտիրոսյան (AM), Վլադիմիր Հակոբի Պողոսյան (AM), Համլետ Լեւոնի Յովհաննիսյան (AM), Արթուր Գեւորգի Մարտիրոսյան (AM)
 - (72) Գեւորգ Գրիգորի Մարտիրոսյան (AM), Վլադիմիր Հակոբի Պողոսյան (AM), Համլետ Լեւոնի Յովհաննիսյան (AM), Արթուր Գեւորգի Մարտիրոսյան (AM)
 - (73) Գեւորգ Գրիգորի Մարտիրոսյան, Երեւան, Կյուլպենկյան 2, բն.28 (AM), Վլադիմիր Հակոբի Պողոսյան, Երեւան, Անդրանիկի 42, բն. 23 (AM), Համլետ Լեւոնի Յովհաննիսյան, Արարատի մարզ, գյուղ Արբաթ (AM), Արթուր Գեւորգի Մարտիրոսյան, Երեւան, Կյուլպենկյան 2, բն.28 (AM)
 - (54) **Խցման օղ**
 - (57) Գյուտը վերաբերում է հիդրավիկական համակարգերին եւ կարող է օգտագործվել ավիացիայում եւ մեքենաշինության մեջ:

Խցման օղը փափուկ (60 ըստ Շորի), ցրտակայուն ռետինից պատրաստված ռետինե օղ է, որի մեջ լայնական հատույթի համաչափության առանցքով տեղակայված են զսպանակային պողպատից պատրաստված սեկտորային տարրեր: Կլոր լայնական հատույթ ունեցող խցման օղի սեկտորային տարրերի լայնական հատույթը կլոր է, իսկ ուղղանկյունաձեւ լայնական հատույթ ունեցող խցման օղի սեկտորային տարրերի լայնական հատույթը՝ ուղղանկյունաձեւ:

Բարձրացվում են խցման օղի հերմետիկացնող հատկությունները, 2 նկ:

(51) (2006) (11) **1886** (13) **A2**
G01B 3/00
G01B 3/02

(21) AM20060050 (22) 30.03.2006
(42) 01.06.2006

(71) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Վահե Յրանտի Ղուկասյան (AM), Պատվական Ռուբենի Յախինյան (AM)

(72) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Վահե Յրանտի Ղուկասյան (AM), Պատվական Ռուբենի Յախինյան (AM)

(73) Կարեն Վոլոդյայի Գասպարյան, Երեւան, Լեփսիուսի 10ա, բն. 18 (AM), Վահե Յրանտի Ղուկասյան, Կոտայքի մարզ, Չարենցավան, 6-րդ թաղամաս 19, բն. 19 (AM), Պատվական Ռուբենի Յախինյան, Երեւան, Մ. Մելիքյան 13, բն. 23 (AM)

(54) Էլեկտրական չափերիզ

(57) Գյուտը վերաբերում է գծային չափերի չափիչներին, մասնավորապես՝ ճկուն ժապավեն ունեցող չափերիզներին, որոնցում որպես շարժաբեր կիրառված է էլեկտրաշարժիչ:

Էլեկտրական չափերիզն ունի իրանի մեջ տեղակայված ժապավեն կրող թմբուկ, թմբուկի առանցքային խոռոչում տեղակայված ինքնավար աղբյուրից սնվող էլեկտրաշարժիչ, նրա ոլորող մոմենտի փոխանցման հանգույց, որը կազմված է դիֆերենցիալից եւ աստիճանավոր փոխանցիչից:

Դիֆերենցիալի առաջին արեգակնային անիվն էլեկտրաշարժիչի լիսեռին կոշտ ամրակցված տանող անիվն է, երկրորդ արեգակնային անիվը համառանցք է թմբուկին եւ կոշտ ամրակցված է նրան: Փոխանցիչի մուտքային անի-

վը կառչման մեջ է դիֆերենցիալի սկավառակաձեւ տարիչի հետ, իսկ ելքային անիվը շփական կապի մեջ է չափողական ժապավենի հետ:

Դիֆերենցիալի շնորհիվ, էլեկտրաշարժիչի ոլորող մոմենտը բաշխվում է ելքային անվի եւ թմբուկի միջեւ՝ դրանց հակազդող մոմենտների հարաբերակցությանը համապատասխան:

Էլեկտրական շղթայում չափերիզն ունի հինգ-դիրքանի փոխարկիչ, որի կենտրոնական դիրքը համապատասխանում է էլեկտրաշարժիչի անջատված վիճակին, իսկ երկուական եզրային դիրքերը համապատասխանում են էլեկտրաշարժիչի լիսեռի դարձափոխելի պտտման դանդաղ եւ արագ ռեժիմներին:

Բարձրացվում է չափերիզի աշխատանքի հուսալիությունը, փոքրացվում են նրա եզրաչափերը, 5 նկ.:

(51) (2006) (11) **1887** (13) **A2**
G01J 1/02

(21) AM20060035 (22) 02.03.2006
(42) 02.05.2006

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Պարույր Ավետիսի Մաթեոսյան (AM), Ելենա Գեորգիի Ավետիքովա (AM), Մամիկոն Չալիբեկի Յակոբյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Մթնոլորտային օզոնի խտության չափման սարք

(57) Գյուտը վերաբերում է ֆիզիկայի բնագավառին, մասնավորապես՝ լուսաչափությանը եւ կարող է կիրառվել մթնոլորտային օզոնի խտության չափման համար:

Արեգակի ճառագայթը, անցնելով իրանի մեջ տեղակայված դիաֆրագմայի եւ լուսազտիչի միջով, մտնում է լուսընդունիչ: Լուսընդունիչից ստացվող էլեկտրական ազդանշանը փոփոխական դիմադրության եւ գործության ուժեղարարի միջոցով տրվում է գումարող ուժեղարարի մուտքին, որի մյուս մուտքին պտտեցաչափի միջոցով տրվում է այդ ուժեղարարի լարման նկատմամբ հակառակ բեւեռականությամբ կայունացված հոսանքի հաստատուն լարում: Գու-

մարող ուժեղարարի ելքին միացված է գրանցող սարք: Պոտենցաչափը ծառայում է որպես օգուտի խտության էտալոնային չափիչ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1888** (13) **A2**
G01J 1/02
G01J 1/04
G01J 1/10

(21) AM20060039 (22) 10.03.2006
(42) 02.05.2006

(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Պարույր Ավետիսի Մաթեոսյան (AM), Մամիկոն Չալիբեկի Յակոբյան (AM)

(73) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Արեգակի անդրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության չափման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ֆիզիկայի բնագավառին, մասնավորապես՝ լուսաչափությանը եւ կարող է կիրառվել Արեգակի անդրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության չափման համար:

Արեգակի անդրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության չափման սարքն ունի երկու չափիչ կապուղի: Արեգակի ճառագայթն, անցնելով առաջին կապուղու դիաֆրագմայի եւ անթափանց գտիչի միջով, ընկնում է լուսընդունիչի վրա, որի ելքից ստացվող էլեկտրական ազդանշանը, անցնելով փոփոխական դիմադրության եւ հակադարձելի ուժեղարարի միջով, տրվում է գումարող ուժեղարարի մուտքին: Գումարող ուժեղարարի երկրորդ մուտքին տրվում է միայն դիաֆրագմա եւ լուսընդունիչ ունեցող երկրորդ կապուղուց ստացվող լարում: Գումարող ուժեղարարի ելքի լարումն ուղիղ համեմատական է Արեգակի ճառագայթների ճառագայթման մեծությանը:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը, պարզեցվում է սարքի կառուցվածքը, նվազեցվում է դրա ինքնարժեքը, 1 նկ.:

(51) (2006) (11) **1889** (13) **A2**
G01N 9/00

(21) AM20060030 (22) 23.02.2006
(42) 01.06.2006

(71) «Յայաստանի ճարտարագիտական ակադեմիա» հասարակական կազմակերպություն (AM)
(72) Գագիկ Այվազյան (AM), Ռազմիկ Բարսեղյան (AM), Գեորգի Դանիելյան (AM), Արամ Վարդանյան (AM)

(73) «Յայաստանի ճարտարագիտական ակադեմիա» հասարակական կազմակերպություն, Երևան, Բաղրամյան 24դ (AM)

(54) **Ծակոտկեն նյութերի խտության որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է նյութերի ֆիզիկամեխանիկական բնութագրերի վերլուծությանը, մասնավորապես՝ ծակոտկեն նյութերի խտության որոշման եղանակներին:

Նյութը հաջորդաբար կշռում են օդում եւ հայտնի խտություն ունեցող հեղուկում, որոշում են նյութի «չոր» զանգվածը հեղուկում, ապա հաշվարկում նյութի խտությունը:

Նյութի կշռումը հեղուկում սկսում են դրա մեջ լրիվ ընկղմումից անմիջապես հետո, կատարում են մի քանի հաջորդական կշռումներ՝ զանգվածի փոփոխության ժամանակային բնութագիրը ստանալու համար, նյութի «չոր» զանգվածը հեղուկում որոշում են այդ բնութագրից մաթեմատիկական արտարկման միջոցով:

Բարձրացվում է նյութերի խտության որոշման ճշտությունը:

(51) (2006) (11) **1890** (13) **A2**
G01N 21/03

(21) AM20060048 (22) 29.03.2006
(42) 02.05.2006

(71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Պարույր Ավետիսի Մաթեոսյան (AM), Մամիկոն Չալիբեկի Յակոբյան (AM)

(73) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Մթնոլորտում ծծմբի երկօքսիդի խտության չափման սարք**

(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ մթնոլորտում փնտրվող գազի առկայության հետազոտման սարքերին, եւ կարող է օգտագործվել մթնոլորտի աղտոտման վերահսկման համար:

